

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԱՐԱՆ -1 «ԳՆՈՄՈՆ»
բաց բաժնետիրական ընկերության
տնօրենների խորհրդի կողմից
արձանագրության համարը
1Խ-20, 07. 02. 2020թ.

**ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի արտաքերթ ընդհանուր ժողովի**

Օրակարգ՝

1. Երևանի Ոսկերչական Գործարանի 70 ամյակին նվիրված միջոցառումների քննարկում և ծրագրի հաստատում:
2. Ընկերության հետագա գործունեության ծրագրի (ճանապարհային քարտեզի) քննարկում և հաստատում:
3. Բաժնետերերի (բաժնետոմսեր ունեցողների) շահերը պահպանելու և ամրապնդելու նպատակով բաժնետիրական համաձայնագրի քննարկում և ստորագրում:
4. Երևանի Ոսկերչական Գործարան-1<Գնումն> ԲԲ ընկերության 2019թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության հաստատում:
5. Այլ հարցեր:

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության

N	Անուն, ազգանուն	Ծննդյան թիվը	Քաղ.	Մասնագիտ.	Պաշտոնը	Սով.բաժնետ. «ԵՈԳ» ԲԲԸ
Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ						
1.	Հրանտ Շիրինյան	1967	ՀՀ	բժիշկ	ԵՈԳ-1 <<Գնտոն >> ԲԲԸ գլխավոր տնօրենի գլխավոր խորհրդական	Չունի
2.	Էմիլ Գրիգորյան	1938	ՀՀ	ճարտարագետ	ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ»ԲԲԸ Գլխավոր տնօրեն	110963
3.	Էդուարդ Մաթևոսյան	1945	ՀՀ	իրավաբան	«ԵՈԳ»ԲԲԸ, Իրավաբան իրավաբան	543
4.	Արմեն Գրիգորյան	1965	ՀՀ	ճարտարագետ	Ճարտարագետ	118
5.	Սեդա Հակոբյան	1945	ՀՀ	ճարտարագետ	ճարտարագետ	25000
6.	Հովհաննես Եսայան	1981	ՀՀ	ճարտարագետ	ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ»ԲԲԸ արտադր. գծով տնօրեն	Չունի
7.	Մինաս Մինասյան	1952	ՀՀ	Էմալագործ	Էմալագործ	126

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության

----- 27 փետրվարի 2020թ.
բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ» 70 ամյակին նվիրված միջոցառումների քննարկում և ծրագրի հաստատում:

ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 2. Ընկերության հետագա գործունեության ծրագրի (ճանապարհային քարտեզի)քննարկում և հաստատում::

ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 3. Բաժնետերերի (բաժնետոմսեր ունեցողների) շահերը պահպանելու և ամրապնդելու նպատակով բաժնետիրական համաձայնագրի քննարկում և ստորագրում:

ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 4. «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ ընկերության 2019թ.ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության հաստատում:

ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 5. Այլ հարցեր:

ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

..... **ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1Խ-20

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1«ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ
տնօրենների խորհրդի նիստի

ք. Երևան

07.02. 2020թ.

Ներկա են ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1«ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի հետևյալ անդամները՝

Հրանտ Շիրինյան - խորհրդի նախագահ – ԵՈԳ-1<ԳՆՈՄՈՆ>ԲԲԸ գլխ. տնօրենի
գլխ. խորհրդական

Էմիլ Գրիգորյան - խորհրդի անդամ - ԵՈԳ -1 « Գնումն » ԲԲԸ Գլխ. տնօրեն

Արմեն Գրիգորյան - խորհրդի անդամ - Ճարտարագետ

Սեդա Հակոբյան - խորհրդի անդամ - Ճարտարագետ

Յովհաննես Եսայան - խորհրդի անդամ - ԵՈԳ -1 « Գնումն » ԲԲԸ Ա / Տ տնօրեն

Էդուարդ Մաթևոսյան - խորհրդի անդամ - ԵՈԳ -1 « Գնումն » իրավաբան

Մինաս Մինասյան - խորհրդի անդամ - ԵՈԳ-1 <<Գնումն>> Էմալագործ

Քարտուղար՝

Էլեոնորա Կաֆյան

1. Ձեկույցով հանդես եկավ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ Գլխավոր տնօրեն Է. Գրիգորյանը, որն առաջարկեց ս/թ փետրվարի 27-ին անցկացնել ԵՈԳ-1<ԳՆՈՄՈՆ>ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ժողով և ներկայացրեց խորհրդի անդամներին ժողովի օրակարգը:

Այս կապակցությամբ որոշեցին՝

1. Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովը հրավիրել 2020 թվականի փետրվարի 27-ին, ժամը 17.00, ք.Երևան , Արշակունյանց 12 հասցեում:

2. Հաստատել ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի հետևյալ օրակարգը՝

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Երևանի Ոսկերչական Գործարանի 70 ամյակին նվիրված միջոցառումների քննարկում և ծրագրի հաստատում:
2. Ընկերության հետագա գործունեության ծրագրի (ճանապարհային քարտեզի) քննարկում և հաստատում:
3. Բաժնետերերի (բաժնետոմսեր ունեցողների) շահերը պահպանելու և ամրապնդելու նպատակով բաժնետիրական համաձայնագրի քննարկում և ստորագրում:
4. Երևանի Ոսկերչական Գործարան-1<Գնումն> ԲԲ ընկերության 2019թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության հաստատում:
5. Այլ հարցեր:

Անդամներ՝

- Հ.ՇԻՐԻՆՅԱՆ
- Է.ԳՐԻԳՈՐՅԱՆ
- Ս.ՀԱԿՈԲՅԱՆ
- Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ
- Ջ. ԵՍԱՅԱՆ
- Է. ՍԱԹԵՎՈՍՅԱՆ
- Մ.ՄԻՆԱՍՅԱՆ

քարտուղար՝

Է. ԿԱՖՅԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1Ժ- 20

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի,
կայացած 2020 թվականի փետրվարի 27-ին, ժամը 17.00

Ժողովի նախագահ ընտրվեց Ընկերության բաժնետոմսերի նշանակալից սեփականատեր Է. Գրիգորյանը, քարտուղար՝ Է. Կաֆյանը (միաձայն): Միաձայն ընտրվեց նաև հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած երեք հոգուց՝ Ժամհարյան Արմինե, Ղազարյան Գայանե, Ներսիսյան Արշալույս: Հաշվիչ հանձնաժողովը զեկուցեց, որ ներկա են Ընկերության 1 095340 հատ տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերից թվով 52 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնց պատկանում է 949 207 հատ բաժնետոմս / 87 %/, այդ թվում Ընկերության 831218 հատ բաժնետոմսերի սեփականատեր «Գնունոն» ՍՊԸ, ի դեմս նրա լիազոր ներկայացուցիչ Հրանտ Շիրինյանի:

Քվորումն առկա է:

Ժողովի նախագահ Է. Գրիգորյանը հաստատման ներկայացրեց ժողովի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ`

1. Երևանի Ոսկերչական Գործարանի 70 ամյակին նվիրված միջոցառումների քննարկում և ծրագրի հաստատում:
2. Ընկերության հետագա գործունեության ծրագրի (ճանապարհային քարտեզի) քննարկում և հաստատում:
3. Բաժնետերերի (բաժնետոմսեր ունեցողների) շահերը պահպանելու և ամրապնդելու նպատակով բաժնետիրական համաձայնագրի քննարկում և ստորագրում:
4. Երևանի Ոսկերչական Գործարան-1<Գնունոն> ԲԲ ընկերության 2019թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության հաստատում:
5. Այլ հարցեր:

Բաց քվեարկությամբ ժողովի օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց Է.Գրիգորյանը: Քննարկվեց միջոցառման անցկացման վայրը, միջոցառման գովազդի, հյուրերի հարցերը: Որոշվեց բոլոր կազմակերպչական հարցերը իրականացնել ընկերության ներկայիս աշխատակիցների միջոցով:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ՝ - 942207

դեմ՝ - 0

ձեռնպահ՝ - 0

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց և պարզաբանեց Է.Գրիգորյանը: Նա հիշեցրեց ներկաներին գործարանի անցած ուղին և մանրամասն պատմեց ընկերության ներկա 4 հիմնական (ոսկերչություն, ժամագործություն, հուշամեդալներ, զինվորական համազգեստի ակսեսուարներ) արտադրական ուղղությունների մասին: Նա նշեց, որ գործարանը ունի անընդհատ զարգացման ծրագրեր բոլոր նշված հիմնական արտադրական ուղղությունների համար, ունի անհրաժեշտ հաստոցներ և սարքավորումներ և շարունակում է ձեռք բերել ըստ արտադրական անհրաժեշտության նորերը, վերազինելով արտադրությունը:

Է.Գրիգորյանը նշեց գործարանի բազայի վրա ազգային դրամահատարանի ստեղծման հնարավորության մասին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը լիովին պատրաստ է մետաղադրամների արտադրությանը: Դրա վառ ապացույցն է ընկերության մասնակցությունը Բեռլինում և Մոսկվայում անցկացվող հուշադրամների խոշորագույն միջազգային տոնավաճառներին և այնտեղ, ընկերության տաղավար այցելած մասնագետների կարծիքները և բարձր գնահատականը մեր կողմից ներկայացված արտադրանքի վերաբերյալ:

Է.Գրիգորյանը կարևորեց նաև ինժեներական ուսուցման հարցը, խոսելով հայ երեխաների համար ոսկերչական դպրոցի ստեղծման, հայ շնորհալի երեխաների Հայաստանում ուսուցանելու կարևորությունը:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ՝ - 942207

դեմ՝ - 0

ձեռնպահ՝ - 0

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ խոսեց Է.Մաթևոսյանը: Նա մանրամասն պատմեց <ԵՈԳ> ԲԲ ընկերությունում ստեղծված բարդ իրավիճակի մասին, պատմեց թե ինչպես են Է.Գրիգորյանը և ինքը հանդիսանալով նաև <ԵՈԳ> ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամներ, ներկայացնում բաժնետերերի շահերը: Հետագայում այդ գործընթացը առավել արդյունավետ դարձնելու համար Է.Մաթևոսյանը ընթերցեց ժողովի մասնակիցների համար <Բաժնետիրական համաձայնագրի> տեքստը , որից հետո բաժնետերը համամիտ լինելով համաձայնագրի բովանդակությանը ստորագրեցին այն և լիազորեցին Է.Գրիգորյանին և Է.Մաթևոսյանին, որպես ԵՈԳ -1<ԳՆՈՄՈՆ> ԲԲԸ և <ԵՈԳ> ԲԲ ընկերությունների լիազոր ներկայացուցիչներ ձեռնարկել հետագայում օրենքով սահմանված անհրաժեշտ գործողություններ և պաշտպանել երկու ընկերությունների բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի օրինական շահերը ՀՀ պետական, հասարակական , համայնքային կազմակերպություններում, բոլոր ատյանների դատարաններում, դատախազությունում, ոստիկանությունում և այլ մարմիններում: Բաժնետերերը հավանություն տվեցին ներկայացված համաձայնագրին և իրենց ստորագրություններով հաստատեցին այն:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ՝ - 942207

դեմ՝ - 0

ձեռնպահ՝ - 0

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ գլխավոր տնօրեն Է. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ:

Իր ելույթում նա ներկայացրեց միակ հայտ ներկայացրած <Պրոգրես- Աուդիտ> ՓԲԸ-ին, նշելով որ այդ կազմակերպությունը նախորդ տարիներին ևս անցկացրել է Ընկերության ֆինանսական գործունեության աուդիտը:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ՝ -949207

դեմ՝ - 0

ձեռնպահ՝ - 0

1. Որոշեցին՝ Որպես Ընկերության 2019թ. ֆինանսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերություն հաստատել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ:

Ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի առձանագրությունները.
Ժողովի օրակարգը սպառվեց և հայտարարվեց նրա փակումը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ՝

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Է. ԿԱՖՅԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի արտահերթ 27.02.2020թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 52 բաժնետերեր կամ նրանց լիազոր
ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
/ 1 095 340 հատ / հանդիսանում են 949207 բաժնետոմսի սեփականատեր, կամ
ժողովին ներկա էին 87% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է
քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ժամհարյան

Գ. Ղազարյան

Ա. Ներսիսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՍՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի ընդհանուր արտահերթ 27.02.20թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ
արդյունքները՝ (առկա 949207 ձայների քանակից)

1. Երևանի Ոսկերչական Գործարանի 70 ամյակին նվիրված միջոցառումների
քննարկում և ծրագրի հաստատում:

կողմ - 949207 դեմ -0 ձեռնպահ - 0

2. Ընկերության հետագա գործունեության ծրագրի (ճանապարհային
քարտեզի) քննարկում և հաստատում:

կողմ - 949207 դեմ -0 ձեռնպահ - 0

3. Բաժնետերերի (բաժնետոմսեր ունեցողների) շահերը պահպանելու և
ամրապնդելու նպատակով բաժնետիրական համաձայնագրի քննարկում և
ստորագրում:

կողմ - 949207 դեմ -0 ձեռնպահ - 0

4. Ընկերության 2017թ. Ֆինանսական գործունեության աուդիտ անցկացնող
մասնագիտացված աուդիտորական ընկերության հաստատումը՝

կողմ - 949207 դեմ -0 ձեռնպահ - 0

Ընկերության 2019թ. Ֆինանսական գործունեության աուդիտ անցկացնող
մասնագիտացված աուդիտորական ընկերությունը հաստատվեց:

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ժամհարյան

Գ. Ղազարյան

Ա. Ներսիսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական
Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր 27.02.20թ. Ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի միատի

Ժողովին մասնակցում էին 52 բաժնետերեր կամ նրանց լիազոր
ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից

/ 1 095 340 հատ / հանդիսանում են 949207 բաժնետոմսի սեփականատեր, կամ
Ժողովին ներկա էին 86,2% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է
քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ
օրակարգի մեկ հարցը բաժնետերերը հաստատել են հետևյալ կերպ.

1. կես – կողմ - 949207 ձայն, դեմ` - 0, ձեռնպահ` - 0
2. կես – կողմ - 949207 ձայն, դեմ` - 0, ձեռնպահ` - 0
3. կես – կողմ - 949207 ձայն, դեմ` - 0, ձեռնպահ` - 0
4. կես – կողմ - 949207 ձայն, դեմ` - 0, ձեռնպահ` - 0

Հանձնաժողովի անդամներ`

Ա. Ժամհարյան

Գ. Ղազարյան

Ա. Ներսիսյան